ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 145-Ա 03 օգոստոսի 2015 թ.

ԲՅՈՒՐԵՂԻԿ ՄՈՒՇԵՂԻ ՀՈՎԵՅԱՆԻՆ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 11.3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2006 թվականի փետրվարի 1-ի N15-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5.3-րդ կետի դրույթներով՝

կարգադրում եմ՝

1. 2015 թվականի օգոստոսի 3-ից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրվելը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Բյուրեղիկ Մուշեղի Հովեյանին:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ